«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ընթերցանության հմտությունները համագործակցային մեթոդի միջոցով

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ռոզա Ասատրյան

ՄԱՐԶ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գեղաձորի Արտակ Օհանյան անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Բովանդակություն……..……2
Ներածություն……3
Ընթերցանության դերը ուսուցման գործընթացում……6
Գրադարանային միջավայրը ընթերցանության կազմակերպման ու խրախուսման միջոց……10
Համագործակցային ուսման կազմակերպումը……11
Ընթերցանության խթանումը ավագ դասարաններում……13
Եզրակացություն……17
Գրականության ցանկ……..18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով» Մարկոս Ավրելյիոս:

Յուրաքանչյուր դարաշրջան, իր հետ բերելով նորամուծություններ, առաջադեմ գաղափարներ ու տեխնոլոգիաներ, բերում է նաեւ որոշակի խնդիրներ ու մարտահրավերներ: Ժամանակակից աշխարհում, որտեղ օրեցօր կատարելագործվող տեխնիկայի, տեղեկատվական սարքավորումների ու էլեկտրոնային ծրագրերի միջոցով լուծելի են դարձել բազմաթիվ մարտահրավերներ, որտեղ ամենաթանկը տեղեկատվությունն է համարվում, թվում է՝ լուսանցք է մղվել դարեր շարունակ հասարակության զարգացման գլխավոր շարժիչ ուժը համարվող գիրքը:

Եթե մինչ այս գրքի հանդեպ ուշադրության նվազումը նկատելի էր, ապա հիմա այն առավել քան ակնառու է: Ժամանակին ընթերցանությունը համարվում էր անձի զարգացման, մտահորիզոնի ընդլայնման եւ բառապաշարի հարստացման ամենաարդյունավետ միջոցը,ապա այսօր դա շատերի կողմից ավելորդ ժամանակի կորուստ է դիտվում:

Ընթերցանությունը արվեստ է: Այդ արվեստը դեպի վեր թռչող թռչուն է, որն ունի երկու թեւ՝ գիրքը եւ ընթերցողը: Միայն լավ ընթերցողի շնորհիվ է նյութը վերածվում գեղարվեստական արժեքի:

Այժմ ընթերցանությունը անկում է ապրում: Կարդացող, ընթերցող ձեւավորելու հիմնական վայրը դպրոցն է:

Նորարական տեխնոլոգիաների շնորհիվ հնարավոր է դարձել ընդգրկել ընթերցողների ավելի մեծ խումբ, որոնք սիրով ծանոթանում են նոր գրքերին և նոր տեղեկատվոթյոններին: Աշխատանքում կիրառվել են հետևյալ դները՝ հետազոտություն, հարցում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընթերցանության ոսոցմանիրականացման այն հնարավորությունները ո ողիները, որոնք կնպաստեն սովորողների հաղորդակցային կոմպետենցիաների զարգացմանը: Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ Ուսումնասիրել ընթերցանության ոսոցման մեթոդիկան: Ներկայացնել միջնակարգ դպրոցի ընթերցանության դասավանդման պետական չափորոշիչների պահանջները:

Ուսուասիրել ընթերցանության ուսուցման առանձնահատկություններն, սկզբունքները, Հետազոտել ընթերցանության տեքստերի տեսակները և նրանց ընտրությանը ներկայացվող պահանջները միջնակարգ դպրոցում, ընթերցանությանկազմակերպման միջոցներ և հնարքներ: Ներկայացնել ընթերցանության ռազմավարությունների կիրառում ոսոցման ժամանակ:

Յուրաքանչյուր ուսուցիչ միշտ փնտրում է իր աշակետների ընթերցանության մոտիվացիան խթանելու ուղիներ: Հետազոտությունները հաստատում են, որ երեխայի մոտիվացիան հաջող ընթերցման կարևոր գործոնն է:

Շատ աշակերտներ չեն սիրում մասնակցել գրքի հետ կապված գործողություններին: Այս աշակերտները կարող են խնդիրներ ունենալ համապատասխան տեքստեր ընտրելու համար, և, հետևաբար չեն սիրում կարդալ հաճույքի համար: Նպաստել այդ պայքարող ընթերցողների դրդապատճառին, կենտրոնանալ ռազմավարության վրա, որը կօգնի նրանց հետաքրքրություն առաջացնել և բարձրացնել իրենց ինքնագնահատականը:

Լեզվի ուսուցման եւ ընթերցանության կարողություններն առհասարակ ուղղված են հստակ պատկերացում տալ լեզվի յուրացման եւ ընթերցանության բնույթի մասին: Լրացուցիչ կարողությունները պետք է ընդգրկեն սովորեցնելու փորձառություն, խթանեն վարժկարդալու հմտությանը, գնահատեն գրականությունը և ընթերցեն ինքնուրույն:

Հաճախ ընթերցանություն ասելով հասկանում ենք մայրենիի, գրականության ընթերցանությունը: Այսօր մյուս առարկաները սովորեցնելու համար մեծ ջանքեր են պետք: Երեխան դասը տառապելով հազիվ է կարդում, ուր մնաց հագեցած նյութի իմաստն ընկալի, նոր եզրույթներին ծանոթանա, բովանդակությունը մտապահի, պատմի, հարցերին պատասխանի և այդպես շարունակ:

Աշակերտը, շփվելով գեղարվեստական ստեղծագործության հետ, հաղորդակցվում է նաև դրա հեղինակի, ինչպես նաև հերոսների հետ, երկխոսության մեջ է մտնում նրանց հետ, հետագայում կարողանում է ոչ միայն քննարկել, քննադատել, համեմատել դեմքերն ու դեպքերը, այլ նաեւ զուգահեռներ ստեղծել գրական ստեղծագործության և իրականության միջեւ՝ ձեռք բերելով կենսափորձ ու նմանօրինակ իրադրություններում արագ կողմնորոշվելու եւ ճիշտ գործելու կարողություն:

Աշակերտը պետք հասկանա, որ գրականությունը վերացական հասկացություն չէ: Այն շոշափելի է, կիրառելի, գեղարվեստական ստեղծագործությունը սոսկ պատմություն չէ, այլ կյանքի որեւէ իրավիճակի գեղարվեստական արտացոլումն է, որը կարող է ուղղորդել նաև իրեն՝ դառնալով լույսի փարոս:

Բացի այն, որ ընթերցանությունը մարդուց անհատ է կերտում, այն նաև նպաստում է մարդու սոցիալականացմանը: Մարդը կարողանում է ճանաչել դիմացինին, հասկանալ նրա հոգեբանությունը, ապրումակցել նրան, նրա հետ շփման եզրեր գտնել, տեսնել դիմացինի արարքների պատճառահետեւանքային կապը և ըստ այդմ պլանավորել սեփական անելիքները, կարողանալ ազդել դիմացինի վրա, ունենալ սեփական տեսակետ և կարողանալ պաշտպանել այն...

Ընթերցանությունը գրագիտության հիմքն է, ինչը ժամանակակից լիարժեք անձնավորության ձեւավորման պարտադիր պայման է: Աշակերտը պետք կարողանա տիրապետի և կիրառի կարդալու հիմնական մարտավարությունները, որպեսզի կարողանա ընտրել տեքստը, բացատրի և անհրաժեշտ ուղղումներ անի: Աշակերտը պետք է կարողանա տեքստում ինքնուրույն գտնել ցանկալի

տեղեկությունը, տարբեր տվյալներ օգտագործել՝ տեքստը խորությամբ հասկանալու նպատակով, տվյալները վերլուծել, անել եզրահանգումներ:

Ընթերցանության դերը ուսուցման գործընթացում

Ինչպե՞ս հասնել այն բանին, որ աշակերտները դպրոցում ստանան համապատասխան գիտելիքներ, ձեռք բերեն անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ, կարողանան ընթերցել եւ սիրեն ընթերցանությունը:

Որպեսզի աշակերտները ուշադրությունը սեւեռեն կարդալու եւ լսելու վրա, կիրառում եմ փոխներգործուն համագործակցային մեթոդը: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Ընտրել եմ հինգերորդ դասարանը: Դասի թեման Հ. Ք. Անդերսենի «Սոխակը» հեքիաթն է, որը պետք է ընթերցվի ուսուցչի կողմից՝ճիշտ եւ գեղեցիկ առոգանությամբ: Հեքիաթը կիսատ ընթերցելուց հետո հարցեր եմ ուղղում դասարանին:

-Ձեր կարծիքով ի՞նչ է պատահելու

-Ի՞նչ փաստարկներ ունեք այդ կարծիքը ստեղծելու համար:

Աշխատանքի ընթացքն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ այս մեթոդն ավելի արդյունավետ է, աշակերտներն ավելի կլանված եւ ուշադիր են լսում, որ տեսնեն արդյոք ճիշտ են գուշակել կարդացածի շարունակությունը: Այս աշխատանքը զարգացնում է ոչ միայն լսելու կարողությունը, այլ նաեւ նպաստում նրանց ուշադրության կենտրոնացմանը:

Աշակերտները ավելի ակտիվ են, այստեղ կա ուսուցչի եւ աշակերտների միջևփոխգործակցություն, որտեղ ուսուցիչը եւ աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ և ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի են:

Աշակերտը պետք է տիրապետի ինքնուրույն կարդալ կարողանալու հմտություններին: Այն պետք է կազմակերպել այնպես, որ աշակերտները ոչ միայն ընկալեն հաղորդվող գիտելիքները, այլեւ սովորեն խորհել, դատել, վերլուծել եւ ինքնուրույն հետևություններ կատարել: Ուստի, մեր՝ ուսուցիչներիս ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե՛ ուսումնական, թե՛ արտադասարանական գործունեությունների միասնությունը[1]:

Ընթերցանության արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել և ուսումնասիրել սովորողների ճանաչողական

[1] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 96:

հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը և նպատակասլաց կերպով զարգացնել դրանք:

Մինչև բնագրի արտահայտիչ ընթերցման նախապատրաստումը պետք է՝

1. Դասարանում դիտարկել ստեղծագործության վերնագիրը: Պարզել նրա տրամաբանական կապը բնագրի բովանդակության հետ, որոշել բնագիրը բարձրաձայն կարդալու արտահայտչամիջոցները, ընտրել դրանցից ամենանպատակահարմարը;
2. Ընթերցելուց հետո երկխոսության կամ հարց ու պատասխանի միջոցով կազմակերպել զրույց բնագրի շուրջ՝ դուրս բերելով ,,թաքնված,, հարցերը, որոնցով աշակերտները պիտի ընկալեն խորությունը:
3. Ուսուցչի օգնությամբ,հուշումներով բնագրի վրա կատարել նշումներ, ընդգծել կարեւոր մտքերը, հենակետային բառերը, որոշել հանգուցային նախադասությունները և դրանց բարձրաձայն ընթերցման առոգանության երանգները:
4. Աշակերտները պետք է որոշեն ստեղծագործության գլխավոր գաղափարը և այն ընթերցանության ուղղությամբ իրենց կողմից տարվելիք աշխատանքի պլանը:

«Սոխակը» հեքիաթը անցկացրել եմ համագործակցային մեթոդով: Դասարանը բաժանել եմ խմբերի: 1-ին խումբը ներկայացրեց սոխակին՝ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելով: Խումբը նշեց.

-Սոխակը շատ գեղեցիկ երգող թռչուն է: Նա չափերով շատ փոքրիկ է, ունի կարճ պոչիկ:

Սնվում է հատապտուղներով,միջատներով: Բույն է դնում գետնին,ծառերի ու թփերի խիտ ճյուղերին:

2-րդ խումբը ներկայացրեց, թե ինչն է ամենաթանկ պարգեւը երգչի համար: Արցունքը, ահա թե որն է ամենաթանկ պարգեւը: Ասացին, թե որ հատվածն է ամենաշատը դուր եկել իրենց:

-Ամենաշատը դուր եկավ սոխակի ներողամտությունը եւ այն պատասխանը, որ ամենաթանկ պարգևը երգչի համար արցունքն է եւ սոխակի երգը այնքան գեղեցիկ է նկարագրված, որ ես կարծես լսում եմ այդ երգը:

3-րդ խումբը ներկայացրեց բնական եւ արհեստական սոխակների տարբերությունը: հետո ավելացրեցին իրենց դուր եկած հեքիաթի այն հատվածը,երբ աղջիկը պատմում էր, թե ինչպես ամեն անգամ անտառից տուն վերադառնալիս նստում է հանգստանալու և լսում է սոխակի անուշ երգը: Այդ երգը լսելիս նրա աչքերն արտասուքով են լցվում, իսկ սիրտն այնպես է հրճվում, կարծես իր մայրիկին համբուրելիս լինի[2]:

[2] https://hy.eferrit.com/:

Որպեսզի աշակերտների մոտ ճիշտ զարգանա կարդալու կարողությունը, նրանք լսեցին «Սոխակը», հեքիաթը՝ համակարգչով:

Այնուհետեւ աշակերտները նկարեցին իրենց պատկերացրած նկարները ,,Սոխակը,, հեքիաթի վերաբերյալ:

Կատարվեց դասի անդրադարձ՝ նտագրոհի մեթոդով.

- ինչու կայսրը վայելեց մեխանիկական սոխակի երգը
- կարող ենք ասել կայսեր համար ծանր պահին լարովի խաղալիքը լռում է, իսկ կենդանի սոխակի իրական երգը վտարում է մահին եւ օգնում կայսրին առողջանալ
- ինչ հասկացավ կայսրը, երբ սոխակը փրկեց նրան
- ինչու է վերջին արտահայտությունը «բարեւ»...
- Աշակերտները ակտիվ քննարկեցին եւ յուրաքանչյուրը ներկայացրեց իր կարծիքը

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետրաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: մեկ

աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դռևս բավարար չէ: Ուսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հնտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպե նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ: Հայաստանի դպրոցներն ի տաբերություն այլ երկրների դպրոցների ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաներ[3]:

Ընթերցանության տեքստերի տեսակները և նրանց ներկայացվող պահանջները միջնակարգ դպրոցում.

Տեքստ ասելով հասկանում ենք բանավոր կամ գրավոր խոսքի ցանկացած հատված, որը լեզուն օգտագործողները կամ սովորողները ստանում, վերարտադրում կամ փոխանակում են: Հետևաբար, առանց տեքստի, ոչ մի լեզվական հաղորդակցություն չի կարող տեղի ունենալ: Յուրաքանչյուր խոսքային գործունեություն և լեզվական գործընթաց վերլուծվում և դասակարգվում է նկատի ունենալով լեզուն օգտագործողի/սովորողի կամ որևէ այլ զրուցակցի՝ տվյալ տեքստի հետ ունեցած հարաբերությունը՝ անկախ այն բանից, թե ինչպիսին է այդ տեքստը՝ ավարտուն արդյունք, արտադրանք, թե նպատակ կամ դեռևս մշակվող նյութ:

Յուրաքանչյուր տեքստ փոխանցվում է ինչ-որ միջոցով: Դա սովորաբար տեղի է ունենում ձայնային ալիքների կամ գրավոր նյութերի միջոցով: Տեքստերի ընթերցանության համար նախատեսված նպատակները ներկայացված են օտար լեզուների ուսուցման առարկայական ծրագրերում: Անգլերեն տեքստերի ընթերցման և բովանդակության ընկալման համար միջնակարգ դպրոցում անհրաժեշտ են՝ հայտարարություն, հարցազրույց, ոչ պաշտոնական նամակ (լրագրի մեջ գրված նամակ), ուղեցույց, զովազդ, հաղորդագրություն դեպքի վայրից, պատմվածք, հրապարակախոսական տեքստ, նկարագրական տեքստ, ելույթ, զեկուցում, հատվածներ վեպերից, թերթի հոդված, բնագրեր, գեղարվեստական գրականություն (պիես, դրամա, վեպ, բանաստեղծություն) Հանրակրթական հիմնական դպրոցի անգլերեն ուսումնական առարկայի չափորոշիչ և ծրագիր:

Տեքստեր ունկնդրելու և խոսելու համար՝ հարցազրույց, տեքստ հաղորդագրություն, նկարագրական տեքստ, հեռուստատեսային հաղորդումներ, տեղեկատվություն, հայտարարություն,

[3] Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա- կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

պատմվածք (պատմություն), հատված գեղարվեստական գրականությունից, երկխոսություն - մտքերի փոխանակում, երկխոսություն–հարցում, ձայնագրություն և այլն:

Գրադարանային միջավայրը ընթերցանության կազմակերպման ու խրախուսման միջոց

Միջնակարգ դպրոցում երեխաների ընթերցանության զարգացման մեկ այլ միջոց է հանդիսանում գրադարանային միջավայրը: Գրադարանների դերի ու նշանակությունն անմիջականորեն պայմանավորված է գրադարանային միջավայրով, ինչը կանխատեսում է ֆիզիկական և մեդիա միջոցներով բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ընթերցանության կազմակերպման ու խրախուսման համար՝ բոլոր տարիքի սովորողների, դասավանդողների և ցանկացած ընթերցասեր մարդու համար:

Գրադարանային բարենպաստ միջավայրը խթանում է սովորողի, գրադարանից օգտվող անհատի ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացմանը, գիտելիքների աճին, ինքնակրթությանը, բազմակողմանի զարգացմանը, ունեցած գիտելիքների պաշարն ավելացնելուն, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն, դասերի ընթացքում ստացած գիտելիքները և առարկայական տեղեկատվությունը համալրելուն: Գրադարաններում են դարերի ընթացքում գրքերի միջոցով պահպանվել տեղեկություններ, պատմական իրադարձություններ, մշակութային, բժշկական գիտական, գիտատեխնիկական, ակադեմիական, գեղարվեստական, ուսումնական, ռազմական, մանկական, դպրոցական, անձնական (ընտանեկան) գրառումներ, փաստաթղթեր, որոնք հին դարերում լայն մասսայականություն չեն վայելել հասանելի են եղել հատուկ ուսումնասիրողների, երբեմն էլ որոշակի թույլտվությամբ, ինչը չի կարելի ասել այսօրվա մասին: Ներկայիս և ֆիզիկական, և՛ մեդիա գրադարանները հասանելի են բոլոր մարդկանց համար:

Գրադարանը ստեղծվել է մարդու կողմից և նախատեսված է մարդու համար: Գրադարանների միջոցով է իրականացվում մշակութային արժեքների պահպանման 26 գործընթացը: Պատմա-մշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին, այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջներին համապատասխան:

Համագործակցային ուսման կազմակերպումը

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ:

Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

- անձի զարգացում և անհատականության ձևավորում.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում.
- սթրեսի հաղթահարում.
- առողջ փոխհարաբերությունների դրսևորում:
- Համագործակցային ուսուցման տարրերը

- դրական փոխկախվածության ապահովում.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանա տվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթացի մշակում.
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրան քի կատարում[4]:

Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարները

- Թիմային առաջադիմություն,
- Խճանկար,
- Պատկերասրահում,
- Խմբային հետազոտություն,
- Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա ՏՏ ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել:

Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց

[4] Ս.Գ., Խաչատրյան Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները[5]:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ընթերցանություն, խորհրդանիշերի վերծանման բարդ ճանաչողական գործընթաց՝ ուղղված տեքստի հասկանալուն: Լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության եւ գաղափարների փոխանակման միջոցներից մեկը: Ընթերցանությունը տեքստի եւ կարդացողի միջեւ բարդ փոխազդեցություն է, որը ձեւավորվում է նախնական գիտելիքների, փորձի եւ կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով եւ սոցիալական վիճակով:

Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում եւ քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ելնելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ընթերցանությունն օգնում է իրազեկ դառնալ գոյություն ունեցող խնդիրների մասին՝ ցույց տալով դրանց հաղթահարման ուղիները: Ընթերցանությունը ինքնավստահություն է ապահովում եւ օգնում է ազատվել սեփական անլիարժեքության ու սահմանափակ լինելու զգացումներից: Ընթերցանությունն ամրապնդում է համոզմունքներն ու հայացքները, մտածելակերպ ու աշխարհայացք է ձեւավորում, անհատին պատրաստում է ընդունել նորը, ինչպես նաեւ կարծիքների փոխանակման ու քննարկումներին մասնակցելու արվեստ է սովորեցնում: Եվ ի վերջո, ընթերցանությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ գրականության գոհարների հետ:

Որեւէ հետաքրքիր բանի ընթերցումը մարդուն դուրս է բերում լարվածությունից եւ հանգստացնում է: Գիրքն ու դրա հանդեպ տածած հետաքրքրությունը ժառանգաբար չեն փոխանցվում:

[5] Համագործակցության մանկավարժություն (Վ.Շատալով, Մ.Ճչետինին, Ն.Գուզիկ, Ս.Լիսենկովա), Երևան, 1978:

Դա գիտելիքներ ձեռք բերելու միջոց է, որի օգնությամբ ուսուցումը պատանի հասակում զգալիորեն հեշտանում է: Ուստի՝ կարեւոր է գրքի նկատմամբ ճիշտ վարմունք դաստիարակել, եւ գրքի նկատմամբ հետաքրքրությունը կառաջանա ինքնըստինքյան. մարդն ի վիճակի է վերացնել ընթերցանությանը խանգարող բոլոր խոչընդոտները:

Համապատասխան միջավայրի ու պայմանների նախապատրաստման միջոցով մշակութային զարգացումը նպաստում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը: Դրա լավագույն օրինակներից է գրպանային գրքերի հրատարակման քաղաքականությունը, ինչի շնորհիվ գիրքը կարող է մշտապես «ներկա գտնվել եւ զարդարել անտեղի անցկացվող ժամանակը»:

ԻՆՉՊԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ ՍԵՐ ԱՐԹՆԱՑՆԵԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Ինչո՞ւ երեխաները չեն սիրում ընթերցել: Միգուցե չե՞ն կարողանում: Այս դեպքում խոսքը ոչ թե տառերը չիմանալու, այլ գրքերը հասկանալու եւ ապրելու կարողության բացակայության մասին է: Առաջարկում ենք ծանոթանալ «Գրքային գիդ» կազմակերպության հիմնադիրներից մեկի՝ Մարթա Ռայցեսի «Ընթերցանության օրագրին»:

Ըստ նրա՝ եթե փորձենք երեխային սովորեցնել ընթերցել հետաքրքրաշարժ եղանակով, ապա նրան անպայման դուր կգան գրքերը: Բացի այդ, կսկսեն վերլուծել, հիշել, քննարկել ու ստեղծագործել: Օրագիր ունենալու առավելությունները. օրագիրը մարզում է հիշողությունը, քանի որ երեխան չի կարող հիշել գրքի բոլոր մանրամասները: Դա նվազեցնում է ընթերցելու ցանկությունը: Օրագրում նշումներ կատարելով՝ նրան այլեւս չի անհանգստացնի որեւէ բան մոռանալու խնդիրը:

Օրագրի շնորհիվ նաեւ զարգանում է ինտելեկտը: Օրագրում գրառումներ անելն օգնում է զարգացնել գրավոր խոսքը, լեզվի կարողությունները, գրել փոխադրություններ, շարադրություններ, թելադրություններ:

Ըստ Մարթա Ռայցեսի՝ ոչինչ այնքան չի մոտիվացնում ընթերցողին, որքան մտածելու ազատությունը: Մարթա Ռայցեսի օրագրում տեղ է հատկացված ոչ միայն ընթերցանության գրառումներին, այլեւ ազատ ինքնարտահայտմանը: Ձայրույթը,ոտագնապը, հիացմունքն ու ուրախությունը երեխաները կարող են արտահայտել գրավոր ձեւով: Ընթերցողական օրագրի առաջին էջերում բացատրվում է, թե ինչպես գրքերը պետք է ընթերցել: Մարթա Ռայցեսն առաջարկում է գործի դնել երեւակայությունն ու պատկերացնել դեպքերի ընթացքը, գրել գրքի ավարտը եւ այլն: Դա օգնում է մարզել երեւակայությունը, նպաստում է սեփական մտքեր արտահայտելուն:

Յուրաքանչյուր գիրք նման է նոր կղզու, խորը օվկիանոսի, հին քաղաքի: Խնդրեք երեխային նկարել քարտեզ ու գրանցել դեպքերն ու կերպարները, գործողությունների վայրն ու ժամանակը: Դա օգնում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Խնդրեք երեխային նշել գրքերում

հիշատակվող խմիչքների եւ ուտեստների անվանումները, ապա միասին փորձեք պատրաստել ու հյուրասիրել ընկերներին: Ընթերցանության ընթացքում երեխաները կարող են դուրս գրել մեջբերումները, նոր բառերն ու հետաքրքիր փաստերը, նկարազարդումներ անել, գրել գրախոսություններ, կազմել խաչբառեր:

Ինչպես գիտենք, երեխաներն աչքի են ընկնում հետաքրքրասիրությամբ: Քայլելուն պես նրանք սկսում են ուսումնասիրել ամեն ինչ՝ փորձելով բացել դարակները: Գիրքն էլ մի այդպիսի դարակ է: Հնարավոր է երեխան մոռացել է այդ մասին, քանի որ գրականությունն վերածվել է ձանձրալի կարգուկանոնի, որտեղ գնահատում ու պատժում են սխալվելու համար:

Ընթերցողական օրագիրը ընթերցանությունը վերածում է ստեղծագործական ճանապարհորդության, որտեղ կարելի է խաղալ, երեւակայել, ուսումասիրել ու զարգացնել ընթերցելու կարողությունը: Այն կա յուրաքանչյուրի մեջ, ուղղակի անհրաժեշտ է բացել:

Իսկ ի՞նչ են կարդում այսօրվա երիտասարդներն ամբողջ աշխարհում: Ուսումնասիրելով ամերիկյան եւ ընդհանրապես աշխարհում կիրառական դպրոցական գրականության ծրագրերը՝ պարզում ենք, որ տարածված են ինչպես դասականների՝ Հոմերոսից, Շեքսպիրից մինչեւ Չարլզ Դիքենսի, Մարկ Տվենի ու Մարգրետ Միթչելի, այնպես էլ ժամանակակիցների՝ Օրուելի, Գոլդինգի, Կաֆկայի գործերը, նաեւ ռուս գրականություն՝ Տոլստոյ, Դոստոեւսկի: Հայ սովորողների ընթերցանության ցանկը շատ չի տարբերվում: Բայց մեր խոսքի առարկան կլինի մասնավորապես 20-րդ դարի համաշխարհային գրականությունը: Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում ընթերցանության լուրջ փորձառություն կա: Կոտրելով «Հայ գրականության պատմություն» կոչվող պետական ծրագրի կարծրատիպը՝ նոր մոտեցում ունենք ոչ միայն ծրագրի, այլեւ դրա իրականացման մեթոդի նկատմամբ: Կրթահամալիրի մայրենիի դասավանդող Մարգարիտ Սարգսյանն, օրինակ, օգտագործում է կինոպոեզիան (կինոբեմադրությունը): Պատկերի, կադրի լեզվով սովորողները «վերաշարադրում են» նյութի ոչ այնքան տեքստը, որքան բովանդակությունը:

Ընթերցանությանն են դիմում նաեւ թատրոնի դասերին (ղեկավար՝ կրթահամալիրի մասնագետ՝ Քնարիկ Ներսիսյան): Այստեղ էլ բեմադրության, էտյուդի ու պարի լեզվով են արտահայտում ստեղծագործության դրվագը, տրամադրությունը կամ, որ ավելի հետաքրքիր է, ասելիքը: Կիրառելի ուսումնական նյութ է դառնում նաեւ սովորողի՝ սեփական նկարներով ձեւավորած աուդիոընթերցանությունը: Այս դեպքում լուսանկարների եւ ընթերցանության շեշտադրման միջոցով է սովորողն ակնարկում իր անձի ու հեղինակի ստեղծած կերպարի համահունչությունը: Ցանկացած բեմականացման նախորդում է, իհարկե, վերլուծությունը. «Առաջին քայլը,- գրում է Քնարիկ Ներսիսյանը,- ստեղծագործության, հեղինակի հետ ծանոթությունն է (նստում ենք հատակին, քանի որ համարում ենք, որ հանդիսատեսն ու բեմը պետք է մի մակարդակի վրա լինեն), հետո փորձում ենք

վերլուծել հեղինակի ասելիքը, պիեսից ներկայացմանը հասնելու գործընթացը»: Այս մեթոդի թերությունն այն է, սակայն, որ լավագույն դեպքում սովորողների մի խումբն է միայն մասնակցում նյութի ստեղծմանը, եթե անգամ վերլուծությանը մասնակցում են բոլորը: Յուրաքանչյուր սովորողի իր ասելիքով ներկայանալու հնարավորություն է ընձեռում գրավոր վերլուծությունը՝ էսսեն: Սա գրավոր խոսքը մշակելու լավ միջոց է, որ կիրառվում է ոչ միայն գրականության ու մայրենի խոսքի մշակույթի առիթով: Սովորողներն էսսե են գրում փիլիսոփայությունից, տնտեսագիտությունից, քաղաքացիական իրավունքից եւ այլն: Եթե հասարակագիտական մի շարք առարկաներից էսսեն առաջ քաշած խնդրի՝ ուսուցչի հետ քննարկման եւ որոշ աղբյուրների ուսումնասիրության արդյունք է, ապա գրականությունից՝ դա սովորողի՝ ընթերցանությունից ստացած տպավորությունն է: Սա եւս մեզանում լայնորեն կիրառվող մեթոդ է: Սովորաբար սովորողներն ընթերցում են նյութը, մտքերը գրի առնում եւ քննարկում դասարանում:

Երբ միանգամից հանձնարարում ես ընթեցանության մի քանի նյութ, սովորողներն ընդվզում են. կարծում են՝ բոլորը միասին պիտի ընթերցեն: Թեպետ բոլորը միասին ընթերցելու գաղափարն ամենեւին էլ անիրագործելի չէ:

Եզրակացություն

Հասարակություն և դպրոցը միշտ ձգտել է գիրքը դարձնել երեխայի կյանքի անհրաժեշտ և կարեւոր տարրը: Գրականությունը երեխային կապում է կյանքին, հեքիաթ, վեպ, բանաստեղծություն, պատմվածք, ցանկացած ստեղծագործության սովորեցնում է, թե ինչպես պետք է ապրել և լավ ապրել:

Այսպիսով, սյուն նյութի ուսումնասիրության արդյունքում մենք հանգում ենք այն եզրակացության, որ ուսուցման գործընթացում ընթերցանությունը ունի կարևոր և առանցքային դեր: Մեր՝ ուսուցիչներիս ուսերին է դրված այն կարևոր առաքելությունը, ըստ որի պետք է երեխաների մեջ ձևավորենք սեր դեպի գիրքը և ընթերցանությունը:

Գրականության նկատմամբ սերը ձևավորվում է դպրոցում, ուրեմն պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գրականություն սիրող, հասկացող եւ գնահատող, մշտապես կարդացող, իր հմտությունները կյանքում կենսագործող մարդ դաստիարակելու համար:

Պետք է փաստել, որ ընթերցանությունը զարգացնում է աշակերտների միտքը, բառապաշարը, նպաստում զարգացվածության մակարդակի բարձրացմանը, տալիս համակողմանի գիտելիքներ:

Ընթերցանությունը նաև լավ ուղի է երեխային ուղղորդելու դեպի կյանքի տարբեր դժվարություններ հաղթահարելու: Նորարական տեխնոլոգիաների շնորհիվ հնարավոր է դարձել ընդգրկել ընթերցողների ավելի մեծ խումբ, որոնք սիրով ծանոթանում են նոր գրքերին և նոր տեղեկատվություններին:

Համագործակցային մեթոդը հնարավորություն է տալիս սովորողների էլ ավելի մեծ խմբերի ներգրավվումը դասապրոցեսում և ուսումնական գործընթացը դարձնել ավելի արդյունավետ:

Ընթերցանության ճիշտ կազմակերպված դասերն աշակերտների մեջ սեր են արթնացնում ընթերցանության նկատմամբ, բացահայտում սովորողների հետաքրքրություններն ու հակումները, դաստիարակում ընկերասիրություն, հայրենասիրություն, ձևավորում գեղագիտական հայացքներ, բարոյական արժեքներ, ընդլայնում եւ խորացնում այն գիտելիքները, որ նա ստացել է ընթերցանության դասերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006:

3. Համագործակցության մանկավարժություն (Վ.Շատալով, Մ.Շչետինին, Ն.Գուզիկ, Ս.Լիսենկովա), Երևան, 1978:

4. Մարկոսյան Լ., «Ընթերցողական հմտությունների ձևավորումը»- Հ. Լեզուն և գրականությունը դպրոցում ամսագիր 3-4. 2009:

5. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա- կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005:

6. https://hy.eferrit.com/, 12.09. 2022: